



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՈԹՔԻ ՕՐՈՒԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

Ուրբաթ, 4 Մարտը Կանանց Համաշխարհային Աղօթքի Օրն է:

Այս առիթով, հաւաքական աղօթքի յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ, «Քանի՞ Նկանակ Ունիք» բնաբանով:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ արարողութեան, փոխանցեց իր օրհնութիւնները եւ կատարեց փակման աղօթքը: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանար Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան:

Ներկայ էին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Յովնան Արք. Տերտերեան, Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հոգ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեան, փոխ ժողովրդապետ Հոգ. Տ. Արմենակ Վրդ. Պետրոսեան, եւ Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. Յովսէփ Մաթոսեան:

Յայտագիրը կազմուած էր աղօթքներով, հոգեւոր երգերով, Աստուածաշունչէն ընթերցումներով եւ յաւուր պատշաճի ու գնահատանքի խօսքերով:

PRELATE PARTICIPATES IN WOMEN'S WORLD DAY OF PRAYER

On Friday, March 4th, women around the world will observe the Women's World Day of Prayer. Our local community also participates in this global movement, organizing an event each year on this day to bring together the faithful women of our community for prayer, fellowship, and praise.

This year's prayer service was held at St. Gregory Armenian Catholic Church in Glendale with the theme, "How many loaves have you?"

The Prelate attended and offered his blessings and the benediction. He was accompanied by Rev. Fr. Vazken Atmajian.

H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, St. Gregory Church Rector Very Rev. Fr. Krikor Shahinian, Assistant Rector Very Rev. Fr. Armenag Bedrossian, and Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of N. America, participated in the prayer service.